EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎՈԼՈԴՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 39087/15)

ՎՃԻՌ

Հոդված 13 (+ Հոդված 3) • Հոդված 3 (նյութական) • Կալանքի տակ պահելու ոչ պատշաճ պայմանների առնչությամբ բողոքների մասով իրավական պաշտպանության ներպետական ոչ արդյունավետ միջոցներ • Նվաստացնող վերաբերմունքի հանգեցնող կալանքի տակ պահելու պայմանների, այդ թվում՝ խցերում ոչ պատշաճ անձնական տարածքի հավաքական ազդեցությունը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

3 մայիսի 2022թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Վոլոդյա Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev]՝ *Նախագահ*,

Թիմ Այքը [Tim Eicke],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking],

Անա Մարիա Գուերա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ*,

եւ Իլզե Ֆրայվըրթ [Ilse Freiwirth]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*,

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Վոլոդյա Ավետիսյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2015 թվականի հուլիսի 31-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 39087/15),

գանգատի վերաբերյալ Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու մասին որոշումը,

կողմերի դիտարկումները,

2022 թվականի մարտի 29-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գանգատը վերաբերում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում դիմումատուին կալանքի տակ պահելու պայմաններին եւ այդ մասով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ենթադրյալ բացակայությանը: Դրանով բարձրացվում են հարցեր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի եւ 13-րդ հոդվածի շրջանակներում:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1963 թվականին եւ սույն գանգատը ներկայացնելիս գտնվել է կալանքի տակ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում: Նրան ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ռ. Ռեւազյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է Միջազգային իրավական հարցերով Հայաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերն այնպես, ինչպես ներկայացրել են կողմերը, կարելի է ամփոփ շարադրել հետեւյալ կերպ:

I. «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. 2013 թվականի սեպտեմբերի 23-ից 2015 թվականի մարտի 11-ը դիմումատուն գտնվել է մինչդատական կալանքի տակ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: 2013 թվականի սեպտեմբերի 23-ից 2014 թվականի հուլիսի 16-ն ընկած ժամանակահատվածում նա պահվել է թիվ 13 խցում: 2014 թվականի հուլիսի 17-ից սկսած՝ նա պահվել է թիվ 7 խցում:

6. Դիմումատուն պնդել է, որ նշված խցերն ունեցել են մոտավորապես

15-20 քառակուսի մետր մակերես եւ եղել են գերբնակեցված. իր ներկայացրած փաստարկներում երկու խցերում խցակիցների թիվը տարբեր ժամանակահատվածներում եղել է 5-ից 8 անձ։ Իր դիտարկումներում նա ներկայացրել է լրացուցիչ տվյալներ խցի չափսերի վերաբերյալ՝ տեղական մշտադիտարկման խմբի եզրակացության հիման վրա (տե՛ս ստորեւ՝ 24-րդ պարբերությունը)։ Դիմումատուն պնդել է, որ բանտում չի եղել օդափոխության կենտրոնական համակարգ, եւ խցերը օդափոխվել են պատուհաններով եւ օդափոխիչներով։ Ջեռուցման բացակայության պայմաններում խցերը ջեռուցվել են էլեկտրական ջեռուցիչներով։ Ամբողջ բանտի տարածքում անընդհատ զգացվել է գարշահոտ։ Դիմումատուն իր կալանքի ողջ ժամկետն անցկացրել է խցում՝ բացառությամբ օրական մեկ ժամ դրսում զբոսանքների եւ քննչական միջոցառումներին իր մասնակցության դեպքերի։ Իր խցակիցներից ոմանք ծխել են խցում։ Խցի սանհանգույցի հատվածում հաճախ նկատվել են ոջիլներ, խավարասերներ եւ այլ միջատներ, սակայն բանտի ղեկավարությունը ոչինչ չի ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ։

7. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի կողմից ներկայացված խցերի չափսերը եւ պնդել, որ նշված ժամանակահատվածում թիվ 13 եւ 7 խցերն ունեցել են համապատասխանաբար 35 եւ 32 քառակուսի մետր մակերես։ Նրանք նաեւ պնդել են, որ դիմումատուի կալանքի ժամանակահատվածում խցակիցների թիվը խցերում եղել է 5-ից 8 անձ։ Ի հիմնավորումն իր պնդումների՝ Կառավարությունը ներկայացրել է բանտում կալանքի տակ գտնվող անձանց համապատասխան գրանցամատյանը, որը պարունակել է տեղեկություններ՝ բանտի յուրաքանչյուր խցում գտնվող կալանավորների թվի վերաբերյալ։ Թեեւ դիմումատուի՝ կալանքի տակ գտնվելու 36-օրյա ժամանակահատվածի վերաբերյալ չեն տրամադրվել ամբողջական տեղեկություններ (կամ բացակայել են գրանցամատյանի համապատասխան էջերը, կամ խցակիցների թիվը գրանցված չի եղել, կամ պարզ չի եղել, թե որ ժամանակահատվածին են վերաբերել համապատասխան տեղեկությունները), նշված փաստաթղթից կարել է առանձնացնել հետեւյալ տեղեկությունները։ Դիմումատուին թիվ 13 խցում

կալանքի տակ պահելու ընթացքում նրա խցակիցների թիվը եղել է 7-ից 10-ի սահմաններում, որոշ դեպքերում այն հասել է 12 անձի՝ բացառությամբ 55-օրյա ժամանակահատվածի, երբ խցակիցների թիվը եղել է 5-ից 6-ի սահմաններում: 7-րդ խցում դիմումատուի խցակիցների թիվը եղել է 8-ից 10 անձ՝ բացառությամբ 37-օրյա ժամանակահատվածի, երբ խցակիցների թիվը տատանվել է 6-ից 7-ի սահմաններում, իսկ միայն մեկ անգամ դիմումատուն իր խուցը կիսել է 5 խցակիցների հետ:

II. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ԲՈՂՈՔՆԵՐՆ ԻՐԵՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

8. 2015 թվականի հունվարի 22-ին դիմումատուն Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության եւ բանտի դեմ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան (Վարչական շրջանի դատարան) է ներկայացրել բողոք՝ խնդրելով դատարանին ճանաչել եւ դադարեցնել իրեն կալանքի տակ պահելու պայմանների հետեւանքով Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների շարունակական խախտումը եւ շնորհել ոչ նյութական վնասի հատուցում:

9. Նույն օրը Վարչական շրջանի դատարանը դիմումատուի դիմումը քննել է քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն եւ հայտարարել այն անընդունելի այն հիմքով, որ նման հայցը ընդհանուր իրավասության դատարանի իրավասության շրջանակում չէ, այն ավելի շատ Վարչական դատարանի իրավասության շրջանակում է՝ հաշվի առնելով վերջինիս հանրային իրավունքի բնույթը:

10. 2015 թվականի փետրվարի 9-ին դիմումատուն բողոքարկել է այդ որոշումը՝ պնդելով, որ իր դիմումն ունեցել է քրեաիրավական բնույթ, եւ

հետեւաբար քրեական դատավարության կանոնները կիրառելի են եղել դրա նկատմամբ, մինչդեռ Վարչական շրջանի դատարանն այն քննել է որպես քաղաքացիական հայց եւ մերժել դրա ընդունումը։

11. 2015 թվականի մարտի 2-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը բեկանել է Վարչական շրջանի դատարանի որոշումը՝ պատճառաբանելով, որ դիմումատուի դիմումում բարձրացվել են քրեական իրավունքով կարգավորվող հարցեր, որոնք գտնվում են ընդհանուր իրավասության դատարանների իրավասության շրջանակում, մինչդեռ Վարչական շրջանի դատարանն այն քննել է քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն։

12. 2015 թվականի ապրիլի 29-ին Վարչական շրջանի դատարանը դիմումատուի դիմումը կրկին հայտարարել է անընդունելի՝ քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն։ Դատարանը պատճառաբանել է, որ դիմումը չի ունեցել քրեաիրավական բնույթ եւ վճռել է, որ չնայած Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Քրեական դատավարության օրենսգրքով չի նախատեսվում այնպիսի դատավարական ընթացակարգ, որով հնարավոր է բավարարել նման դիմումը։

13. 2015 թվականի մայիսի 18-ին, հիմնվելով Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վրա, դիմումատուն բողոքարկել է այդ որոշումը՝ ներկայացնելով նույն փաստարկները, ինչ նախկինում։ Դիմումատուն նշել է, որ Վերաքննիչ դատարանն արդեն գտել է, որ իր դիմումում բարձրացվել են քրեական իրավունքով կարգավորվող հարցեր, եւ հետեւաբար գտնվում է ընդհանուր իրավասության դատարանների իրավասության շրջանակում, սակայն Վարչական շրջանի դատարանն այն կրկին քննել է քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն։

14. 2015 թվականի հուլիսի 6-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել վիճարկված որոշումը, սակայն լրացումներ է կատարել իր պատճառաբանություններում։ Այն նաեւ վճռել է, որ թեեւ դիմումատուի դիմումն

ընդհանուր իրավասության դատարանների իրավասության շրջանակում է, այն չէր կարող քննվել քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն. այնուամենայնիվ, Վարչական շրջանի դատարանը դիմումը որպես ընդհանուր իրավասության դատարանների կողմից քննության ոչ ենթակա դիմում մերժելիս չի հիմնավորել իր եզրակացությունները։ Այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանը դիմումը հայտարարել է անընդունելի, քանի որ հաշվի առնելով դիմումատուի հայցի ձեւը, բովանդակությունը եւ խնդրո առարկան՝ այն նման է քաղաքացիական հայցի, մինչդեռ հայցում բարձրացված հարցերն առնչվել են պատժի կատարմանը եւ ենթակա չեն եղել քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն քննության։

15. 2015 թվականի օգոստոսի 3-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք։

16. 2015 թվականի օգոստոսի 26-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի վճռաբեկ բողոքը հայտարարել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով։

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

I. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

Սահմանադրական դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի եվ «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, որն ընդունվել է Վերաքննիչ քրեական դատարանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա

17. Այս որոշման մեջ Սահմանադրական դատարանն ընդունել է, որ օրենսդրական դաշտում առկա է որոշակի անորոշություն այն առնչությամբ, թե որ դատարաններին՝ քրեական հարցերով ընդհանուր իրավասության դատարաններին, թե Վարչական դատարանին է ընդդատյա դատապարտված անձանց կողմից քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) կամ որոշումների բողոքարկման հետ կապված գործերի քննությունը, եւ հորդորում է Ազգային ժողովին կարգավորել այդ անորոշությունը՝ կատարելով իր որոշման մեջ ներկայացված առաջարկություններին համապատասխան փոփոխություններ: Մինչ այդ փոփոխությունները կատարելը քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին:

II. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Ա. ԽԿԿ. Զեկույց Հայաստանի կառավարությանը՝ 2010 թվականի մայիսի 10-ից 21-ը ԽԿԿ-ի՝ Հայաստան կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2011)24

18. Այդ զեկույցի համապատասխան մասերը շարադրվել են հետեւյալ բովանդակությամբ.

> «61. ... Քրեակատարողական հիմնարկների գերբնակեցումը ընդհանուր երեւույթ էր այցելած բոլոր քրեակատարողական հիմնարկներում. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը դրա ամենացայտուն օրինակն էր: Պատվիրակությունն ականատես է եղել, թե ինչ բացասական ազդեցություն է թողել գերբնակեցումը քրեակատարողական հիմնարկում կյանքի շատ ոլորտների վրա. խցակիցների՝ առկա մահճակալների վրա հերթով քնելը, նեղ եւ հակահիգիենիկ կացարանները, կոնստրուկտորական աշխատանքների գրեթե լրիվ

բացակայությունը եւ բացօթյա զբոսանքների հնարավորության սահմանափակումները ...

81. Ինչ վերաբերում է նյութակենցաղային պայմաններին, ապա խցերի մեծ մասը լրջորեն գերբնակեցված էր, խցակիցների մեծ մասը քնում էր հերթով՝ առկա մահճակալների, հատակի վրա (օր.՝ 26 քմ մակերեսով խցում 19 բանտարկյալի համար դրված էր 12 մահճակալ):

Խցերի մեծ մասը (եւ խցերում տեղադրված զուգարանները) գտնվում էին կիսաքանդ վիճակում ... Օդափոխությունը վատ էր իրականացվում, եւ հոսող ջուրը մատակարարվում էր օրական առավելագույնը չորս ժամ (երկու ժամ՝ առավոտյան եւ երկու ժամ՝ երեկոյան):

Ավելին, ցնցուղներն ընդհանուր առմամբ գտնվում էին վերանորոգման անմխիթար վիճակում, եւ բանտարկյալները հնարավորություն ունեին օգտվելու դրանցից լավագույն դեպքում շաբաթը մեկ, իսկ ավելի հաճախ՝ միայն երկու շաբաթը մեկ անգամ:

82. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում բացօթյա զբոսանքի հարցը ԽԿԿ-ի 2002 թվականի առաջին այցից ի վեր շարունակվում էր մնալ չլուծված: Բացօթյա զբոսանքը մինչ այժմ չէր կազմակերպվում շաբաթ եւ կիրակի օրերին հիմնականում անձնակազմի սակավաթիվ լինելու պատճառով, եւ հարցազրույց անցած բանտարկյալներից շատերը նշել էին, որ գործնականում նրանց թույլատրվում էր զբոսնել միայն մեկ անգամ՝ շաբաթական երեք անգամ զբոսանքի փոխարեն:

Բացի քիչ թվով բանտարկյալներից, որոնք աշխատում էին հիմնարկի ընդհանուր սպասարկման ոլորտում (օրինակ՝ մաքրություն, վերանորոգման աշխատանքներ, խոհանոցային աշխատանք), խցակիցների գերակշիռ մեծամասնությունը փակված էր իր խցում օրական 23 կամ նույնիսկ 24 ժամ՝ չունենալով այլ զբաղմունք, քան հեռուստացույց դիտելը, սեղանի խաղեր խաղալը կամ ընթերցանությունը»:

Բ. ԽԿԿ. Զեկույց Հայաստանի կառավարությանը՝ 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը ԽԿԿ-ի՝ Հայաստան կատարած այցի վերաբերյալ, CPT/Inf(2016)31

19. Այդ զեկույցի համապատասխան մասերը շարադրվել են հետեւյալ բովանդակությամբ.

«63. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նյութական պայմանները հիմնականում նույնն էին մնացել, ինչպիսին որ կային 2010 թվականի պարբերական այցի ժամանակ, այսինքն՝ դրանք անընդունելի էին: Չնայած տեղի ուժերով (հիմնականում հենց բանտարկյալների կողմից ու շատ դեպքերում իրենց սեփական միջոցների կամ իրենց ընտանիքների միջոցների հաշվին) ձեռնարկված ջանքերին՝ քրեակատարողական հիմնարկը գտնվում էր ծայրահեղ վատթար վիճակում: Ավելին, այն չափից դուրս գերբնակեցված էր (նույնիսկ հաշվի առնելով 2010 թվականին բնակչության թվի նվազումը), իսկ որոշ բանտարկյալներ չունեին իրենց սեփական մահճակալն ու հերթով էին քնում: Պատվիրակության կողմից դիտարկված մի շարք ստանդարտ՝ 12 մահճակալ ունեցող խցերում կարող էին լինել մինչեւ անգամ 17 բանտարկյալներ, ու բացառություն չէր նաեւ 14 խցակից տեսնելը, հատկապես կալանավորված անձանց պահելու մասնաշենքերում (օրինակ՝ թիվ 16, 34 եւ 51 խցերում):

Շատ խցեր (հատկապես առաջին հարկում) խոնավ էին, թաց, բորբոսապատ, թույլ լուսավորված եւ վատ օդափոխվող, կեղտոտ ու վնասատուներով վարակված: Դեռեւս առկա էին ջրամատակարարման հետ կապված լուրջ խնդիրներ (ջուրը շարունակում էր հասանելի լինել օրական առավելագույնը 4 ժամ): Ընդհանուր օգտագործման լողասենյակները/ցնցուղները կիսաքանդ վիճակում էին, իսկ ցնցուղ ընդունելու հնարավորությունն ընձեռվում էր առավելագույնը շաբաթական մեկ անգամ: Խցերի մեծ մասում միայն կիսով չափ առանձնացված սանհանգույցներ կային: Խոհանոցը եւ լվացքատունը նույնպես կիսաքանդ վիճակում էին:

Բացի այդ, բացօթյա զբոսանքները դեռեւս անհասանելի էին շաբաթ եւ կիրակի օրերին, իսկ եթե դրա հնարավորությունը տրվում էր, ապա, ըստ հաղորդումների, այն միշտ չէ, որ մեկ ժամ էր տեւում: Բանտարկյալների մեծ մասն ստիպված էր օգտվել հիմնարկի տանիքին գտնվող նույն փոքր եւ անհարմար բակերից:

...

65. Ընդհանուր առմամբ Կոմիտեն այն կարծիքին է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կառուցվածքն ու ներկայիս վիճակն այնքան անհամապատասխան են, որ լուրջ մտածելու տեղիք են տալիս հիմնարկի ապագայի եւ դրանում հետագա ներդրումների նպատակահարմարության առնչությամբ (փոխարենը դիտարկելով առկա ռեսուրսները մեկ այլ վայրում կալանքի տակ պահելու պատշաճ պայմաններ ապահովելուն ուղղելու տարբերակը)։ Ամեն դեպքում, եթե որոշում կայացվի «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը ներկայիս տարածքում շարունակելու վերաբերյալ, ապա կենսականորեն անհրաժեշտ կլինի իրականացնել զանգվածային եւ համապարփակ հիմնանորոգման աշխատանքներ, որոնցով կլուծվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են բնական լույսի, արհեստական լուսավորության, օդափոխության ապահովումը, սանհանգույցների լրիվ առանձնացումը, ջրամատակարարումը, ընդհանուր օգտագործման լողասենյակների/ցնցուղների վիճակը, վերաներկումը, վարակազերծումը, խցերում եւ խոհանոցում հիգիենայի ապահովումը»։

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ԵՎ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

20. Դիմումատուն բողոքել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում իրեն կալանքի տակ պահելու ոչ պատշաճ պայմաններից եւ պնդել է, որ իր բողոքի առնչությամբ նա որեւէ արդյունավետ իրավական պաշտպանություն չի ստացել։ Նա հիմնվել է Կոնվենցիայի 3-րդ եւ 13-րդ հոդվածների վրա, որոնք ունի հետեւյալ բովանդակությունը.

Հոդված 3

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»։

Հոդված 13

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Ա. Կողմերի փաստարկները

21. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Իրենց փաստարկների համաձայն՝ ներկայացնելով քաղաքացիական հայց՝ նա կիրառել է ակնհայտորեն անարդյունավետ իրավական պաշտպանության միջոց, մինչդեռ ներպետական դատական որոշումներից (տե՛ս վերեւում՝ 9-րդ, 12-րդ եւ 14-րդ պարբերությունները) իրեն պետք է պարզ դարձած լիներ, որ իր բողոքները պետք է քննվեին կա՛մ վարչական, կա՛մ քրեական վարույթների շրջանակներում, որոնք նման բողոքների դեպքում իրավական պաշտպանության պատշաճ եւ արդյունավետ միջոցներն էին, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածով: Այնուամենայնիվ, դիմումատուն չի օգտվել իրավական պաշտպանության այդ միջոցներից որեւէ մեկից: Այդ առնչությամբ Կառավարությունը հղում է կատարել մի քանի գործերի, բոլորն էլ 2019 թվականի, որոնց դեպքում Վարչական դատարանը քննել է քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց կողմից կարգապահական պատժամիջոց կիրառելու կամ համաներում կիրառելը մերժելու վերաբերյալ որոշումների դեմ դատապարտված անձանց կողմից ներկայացված բողոքները: Մյուս կողմից՝ Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն կարող էր դիմել Սահմանադրական դատարան եւ ձեռք բերել 2019 թվականի հունվարի 22-ի որոշմանը համանման որոշում (տե՛ս վերեւում՝ 17-րդ պարբերությունը), որը կպարտավորեցներ Վարչական դատարանին քննել իր բողոքը:

22. Կառավարությունն այնուհետեւ նշել է, որ դիմումատուին հատկացված անձնական տարածքը (տե՛ս վերեւում՝ 7-րդ պարբերությունը)

համապատասխանել է *Մուրշիչի* գործով նախադեպային իրավունքով սահմանված չափանիշներին, այդ թվում՝ ընդհանուր խցերում կալանավորված յուրաքանչյուր անձի համար 3 քառակուսի մետր անձնական տարածքի ապահովման պահանջին (հղում է կատարվել *Մուրշիչն ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ] [Muršić v. Croatia [GC] գործին, թիվ 7334/13, § 136, 2016 թվականի հոկտեմբերի 20)։ Ներկայացվել է բանտում կալանքի տակ գտնվող անձանց գրանցամատյանի պատճենը, որը պարունակել է տեղեկություններ՝ բանտի յուրաքանչյուր խցում կալանքի տակ գտնվող անձանց թվի մասին, ինչպես նաեւ նշում, որ խցերը նախատեսված են եղել ութը խցակիցների համար։ Կառավարությունն այնուհետեւ նշել է, որ այդ ժամանակից ի վեր նշված խցերը վերակահավորվել են, եւ որ դիմումատուի կողմից մշտադիտարկման խմբի եզրակացություններին հղումով նշված չափսերը (տե՛ս ստորեւ՝ 24-րդ պարբերությունը) համապատասխանել են խցերի ներկայիս չափսերին, որոնք այժմ ավելի փոքր են։ Այդ առնչությամբ ներկայացվել է 2019 թվականի Քրեակատարողական պետական ծառայության պաշտոնատար անձի կողմից արված հայտարարությունը, որտեղ նշված են եղել խցերի նախկին եւ ներկայիս չափսերը։ Կառավարությունը դիմումատուին կալանքի տակ պահելու պայմանների մյուս հայեցակետերի վերաբերյալ նկատառումներ չի ներկայացրել։

23. Դիմումատուն պնդել է, որ իրականում նա պահանջել է իր բողոքը քննել քրեական դատավարության կանոնների համաձայն, սակայն առանց հիմնավոր պատճառների այն մերժվել է քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն։ Վարչական դատարանի գործելակերպը, որին հղում է կատարել Կառավարությունը, կիրառվել է բոլորովին վերջերս՝ 2019 թվականից, եւ այդ գործերից ոչ մեկը նման չի եղել իր գործին։ Բոլոր դեպքերում, նույնիսկ եթե ենթադրենք, որ այս գործը պետք է քննվեր Վարչական դատարանի կողմից, այդ դատարանը չէր կարողանա շնորհել պատշաճ հատուցում, մասնավորապես՝ ճանաչել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների խախտումը, դադարեցնել այդ իրավունքի խախտումը եւ շնորհել ոչ նյութական վնասի փոխհատուցում։ Ավելին, նա նշել է, որ հաշվի առնելով խախտման շարունակական բնույթը, նման բողոքները պարտադիր պետք է քննվեին արագացված կարգով, մինչդեռ բողոքների քննությունը Վարչական դատարանի

կողմից կարող է տեւել տարիներ։ Սա նաեւ վերաբերում է Սահմանադրական դատարանին, որին նա կարող էր դիմել միայն իրավազորության երեք մակարդակներում իրավական պաշտպանության համապատասխան բոլոր միջոցները սպառելուց հետո. եթե Սահմանադրական դատարանն ընդուներ իր դիմումը, ապա ավելի ցածր դատարանին նա պետք է ներկայացներ գործը վերսկսելու պահանջ։ Առաջարկելով իրավական պաշտպանության այս միջոցը՝ Կառավարությունը, ըստ էության, ընդունել է այս բողոքը քննելու հստակ կանոնների բացակայությունը եւ առաջարկել, որ դիմումատուն պահանջի օրենսդրական փոփոխություն։

24. Իրեն կալանքի տակ պահելու պայմանների առնչությամբ եւ ի հիմնավորումն խցերի չափսի վերաբերյալ իր պնդումներին (տե՛ս վերեւում՝ 6-րդ պարբերությունը)՝ դիմումատուն հղում է կատարել չնշված ամսաթվին բանտում տեսչական ստուգում իրականացրած տեղական մշտադիտարկման խմբի եզրակացություններին, որտեղ նշվել է, որ թիվ 13 խցի մակերեսը կազմել է 21.6 քառակուսի մետր, այդ թվում՝ սանհանգույցի տարածքի մակերեսը (3 քառակուսի մետր), իսկ թիվ 7 խցի մակերեսը կազմել է 24.6 քառակուսի մետր, այդ թվում՝ սանհանգույցը (2.7 քառակուսի մետր)։ Դիմումատուն պնդել է, որ սովորաբար խցերում պահվել է ութ խցակից եւ գերբնակեցման պատճառով խցակիցները նույնիսկ ստիպված են եղել քնել հերթով։ Դիմումատուն պնդել է, որ իր իրավիճակը պետք է տարբերակել *Մուրշիչի* գործում ներկայացված իրավիճակից, քանի որ ի տարբերություն այդ գործի դիմումատուի՝ նա փակված է եղել վնասատուներով լի եւ վատ օդափոխվող խցում (որտեղ հատկապես տոթ է եղել ամռան շրջանում) եւ ստիպված է եղել շուրջօրյա շնչել ծխախոտի երկրորդային ծուխը՝ բացառությամբ օրական մեկ ժամ զբոսանքի եւ առանց խցից դուրս որեւէ այլ զբաղմունքի։

Բ. Դատարանի գնահատականը

1. Ընդունելիությունը

25. Դատարանը հաշվի է առնում Կառավարության առարկությունը՝

իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասով (տե՛ս վերեւում՝ 21-րդ պարբերությունը)։ Այն համարում է, որ այս հարցը սերտորեն կապված է դիմումատուի՝ իրեն կալանքի տակ պահելու ենթադրյալ ոչ պատշաճ պայմանների վերաբերյալ բողոքի մասով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն իրավական պաշտպանության արդյունավետ որեւէ միջոց իր տիրապետության ներքո չունենալու մասին բողոքն ըստ էության քննելու հետ։ Հետեւաբար Դատարանն անհրաժեշտ է համարում Կառավարության առարկությունը միացնել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքի ըստ էության քննությանը (տե՛ս *Նեշկովը եւ այլք ընդդեմ Բուլղարիայի* [*Neshkov and Others v. Bulgaria*], թիվ 36925/10 եւ եւս 5-ը, § 163, 2015 թվականի հունվարի 27 եւ *Տեր-Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի* [*Ter-Petrosyan v. Armenia*], թիվ 36469/08, § 52, 2019 թվականի ապրիլի 25)։

26. Դատարանը նշում է, որ այդ բողոքները ո՛չ ակնհայտ անհիմն են, ո՛չ էլ անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածով սահմանված որեւէ այլ հիմքով։ Հետեւաբար գանգատը պետք է հայտարարվի ընդունելի։

2. Ըստ էության քննությունը

ա) Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը եւ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ենթադրյալ խախտումը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցությամբ

27. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնին վերաբերող ընդհանուր սկզբունքներն ամփոփվել են *Վուչկովիչը եւ այլք ընդդեմ Սերբիայի* (նախնական առարկություն) [ՄՊ] [*Vučković and Others v. Serbia* (preliminary objection) [GC]], թիվ 17153/11 եւ եւս 29-ը, § 69-77, 2014 թվականի մարտի 25) գործում։

28. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ իրավական

պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնով պահանջվում է, որ պետության դեմ իրենց գործը Դատարանին ներկայացնել ցանկացողները պետք է առաջին հերթին օգտագործեն ներպետական իրավական համակարգով նախատեսված իրավական պաշտպանության միջոցները: Հետեւաբար Բարձր պայմանավորվող կողմերն ազատվում են վարույթների ընթացքում իրենց գործողությունների կամ անգործության համար Դատարանի առջեւ պատասխանատվությունից, մինչեւ նրանք հնարավորություն կունենան շտկելու իրավիճակն իրենց սեփական իրավական համակարգի միջոցով: Կանոնը հիմնված է Կոնվենցիայի 13–րդ հոդվածում արտացոլված եւ դրա հետ սերտ կապված այն ենթադրության վրա, որ ներպետական իրավական համակարգով ապահովվում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որը կարելի է կիրառել Կոնվենցիայի համաձայն փաստարկելի բողոքի էությունը քննելու եւ իրավական պաշտպանության պատշաճ միջոց տրամադրելու համար: Այս կերպ սկզբունքի կարեւոր հայեցակետ է այն, որ Կոնվենցիայով ամրագրված պաշտպանության մեխանիզմը լրացնում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերը (տե՛ս *Անանեւը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Ananyev and Others v. Russia*], թիվ 42525/07 եւ թիվ 60800/08, § 93, 2012 թվականի հունվարի 10, եւ վերեւում հիշատակված՝ *Նեշկովը եւ այլք*, § 177):

29. Պայմանավորվող պետությունների՝ 13-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների շրջանակը տարբերվում է՝ կախված դիմումատուի բողոքի բնույթից: Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ կալանքի տակ պահելու անմարդկային կամ նվաստացնող պայմանների վերաբերյալ բողոքների մասով հնարավոր է իրավական պաշտպանության երկու տիպի միջոց՝ այդ պայմանների բարելավում եւ դրանց հետեւանքով հասցված վնասի փոխհատուցում: Հետեւաբար այն անձի համար, որը պահվում է նման պայմաններում, իրավական պաշտպանության միջոցը, որը կարող է արագորեն դադարեցնել շարունակվող խախտումները, մեծագույն արժեք է եւ իսկապես, անփոխարինելի է՝ հաշվի առնելով 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքին տրվող հատուկ նշանակությունը: Այնուամենայնիվ, երբ վիճարկվող իրավիճակը հասնում է իր

ավարտին, քանի որ այդ անձն ազատ է արձակվել կամ նրան պահել են այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են 3-րդ հոդվածի պահանջներին, նա պետք է ունենա արդեն իսկ տեղի ունեցած ցանկացած խախտման համար հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունք: Այլ կերպ ասած՝ այս ոլորտում կանխարգելիչ եւ փոխհատուցման ձեւով իրավական պաշտպանության միջոցներն արդյունավետ համարվելու համար պետք է լինեն լրացնող (տե՛ս նույն տեղում, §§ 180-191. *Ուլեմեկն ընդդեմ Խորվաթիայի* [*Ulemek v. Croatia*], թիվ 21613/16, § 71, 2019 թվականի հոկտեմբերի 31, եւ վերջերս կայացված՝ *Շմելյովը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Shmelev and Others v. Russia* (dec.)] թիվ 41743/17 եւ մյուսները, § 85-104, 2020 թվականի մարտի 17):

30. Դատարանն ի սկզբանե նշում է, որ նախկինում այն մերժել է կալանքի տակ պահելու ոչ պատշաճ պայմաններին վերաբերող գործերով իրավական պաշտպանության միջոցները չսպառելու առնչությամբ Հայաստանի կառավարության կողմից բարձրացված առարկությունները (տե՛ս *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի* [*Kirakosyan v. Armenia*], թիվ 31237/03, §§ 55-58, 2008 թվականի դեկտեմբերի 2, եւ *Գասպարին ընդդեմ Հայաստանի* [*Gaspari v. Armenia*], թիվ 44769/08, § 46, 2018 թվականի սեպտեմբերի 20): Սույն գործով Կառավարությունը իրավական պաշտպանության միջոցները չսպառելու առնչությամբ ներկայացրել է նոր հիմքեր՝ հիմնվելով հիմնականում այն փաստարկի վրա, որ վարչական կամ քրեական վարույթ հարուցելու փոխարեն ներկայացնելով քաղաքացիական հայց՝ դիմումատուն դիմել է ակնհայտորեն անարդյունավետ իրավական պաշտպանության միջոցի: Սակայն Դատարանը նշում է, որ թեեւ նրանք պնդել են, որ դիմումատուն պետք է դիմեր իրավական պաշտպանության վարչական կամ քրեական միջոցներին, Կառավարությունը չի ներկայացրել դիմումատուի կոնկրետ բողոքների մասով իրավական պաշտպանության այդ միջոցների արդյունավետության վերաբերյալ որեւէ փաստարկ կամ ապացույց:

31. Նախեւառաջ, պարզ չէ, թե դիմումատուի իրավիճակում ինչ արդյունք կարող էր ունենալ քրեակատարողական ծառայության կամ բանտի իշխանությունների դեմ վարչական կամ քրեական հարցերով դատական մարմնին

դիմելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուի կողմից բարձրացված հարցերը հավանաբար ունեցել են կառուցվածքային բնույթ (տե՛ս համապատասխան ԽԿԿ զեկույցները վերեւում՝ 18-րդ եւ 19-րդ պարբերություններում, եւ համեմատի՛ր վերեւում հիշատակված՝ *Կիրակոսյանի* գործը, § 58, եւ վերեւում հիշատակված՝ *Անանիեւը եւ այլք*, § 111)։ Կառավարությունը չի պարզաբանել դատական կարգով նման վերանայման հնարավոր շրջանակը եւ փոխհատուցման տեսակը, որը դիմումատուն կարող էր ստանալ այն դեպքում, եթե նա դիմեր իրավական պաշտպանության այդ միջոցներից որեւէ մեկին, մասնավորապես, թե արդյոք Վարչական դատարանի կամ քրեական հարցերով ընդհանուր իրավասության դատարանների կողմից նշանակված կանխարգելիչ եւ փոխհատուցման ձեւով իրավական պաշտպանության միջոցներն իրենց ներկայացնելու համար կլինեին լավ հիմնավորված (ի հակադրություն դրա՝ *Դոմջանն ընդդեմ Հունգարիայի* (որոշում) [*Domjan v. Hungary* (dec.)], թիվ 5433/17, §§ 21-30, 2017 թվականի նոյեմբերի 14, *Աթանասովը եւ Ապոստոլովն ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [Atanasov and Apostolov v. Bulgaria (dec.)], թիվ 65540/16 եւ 22368/17, §§ 48-67, 2017 թվականի հունիսի 27, *Դրանիչերուն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* (որոշում) [Draniceru v. the Republic of Moldova (dec.)], թիվ 31975/15, §§ 32-41, 2019 թվականի փետրվարի 12, եւ վերեւում հիշատակված՝ *Շմելյովը եւ այլք*, §§ 107-119)։ Այն ոչ հղում է կատարել որեւէ ներպետական հատուկ կանոնների, ոչ էլ տրամադրել է նույնանման գործերով ներպետական մակարդակում կայացված դատական որոշման որեւէ օրինակ։ Կառավարության կողմից ներկայացված բոլոր օրինակները վերաբերում են դատապարտված անձանց կողմից բանտի իշխանությունների կոնկրետ որոշումների բողոքարկումներին, ինչպես օրինակ՝ կարգապահական պատժամիջոց կիրառելու կամ համաներում կիրառելը մերժելու վերաբերյալ որոշումներին (տե՛ս վերեւում՝ 21-րդ պարբերությունը), ի տարբերություն կալանքի տակ պահելու ոչ պատշաճ պայմանների վերաբերյալ բողոքներին, եւ հետեւաբար վերաբերելի չեն սույն գործին (տե՛ս *Պետրեսցուն ընդդեմ Պորտուգալիայի* [*Petrescu v. Portugal*], թիվ 23190/17, § 82, 2019 թվականի

դեկտեմբերի 3)։

32. Բացի այդ, պարզվում է, որ նշված ժամանակահատվածում ներպետական իրավունքով եւ գործելակերպով հստակ չեն սահմանել, թե որ վարույթով՝ վարչական, թե քրեական, պետք է քննվեին քրեակատարողական մարմինների դեմ ներկայացվող բողոքները։ Այս հարցերով ակնհայտ տարաձայնություն է եղել, մի կողմից՝ Վարչական շրջանի դատարանի, որը պնդել է, որ դիմումատուի բողոքը Վարչական դատարանի իրավասության շրջանակում է (տե՛ս վերեւում՝ 9-րդ եւ 12-րդ պարբերությունները), իսկ մյուս կողմից՝ Վերաքննիչ դատարանի միջեւ, որը համարել է, որ նման դիմումներում բարձրացվում են քրեաիրավական հարցեր, որոնք ընդհանուր իրավասության դատարանների իրավասության շրջանակում են (տե՛ս վերեւում՝ 11-րդ եւ 14-րդ պարբերությունները)։ Կառավարությունը նաեւ հղում է կատարել իրավական պաշտպանության երկու միջոցներին, սակայն չի հստակեցրել, թե որ միջոցն է կիրառելի դիմումատուի գործում։ Այս անորոշությունը 2019 թվականին ակնհայտորեն ընդունվել է Սահմանադրական դատարանի կողմից , որը խնդիրը լուծելու համար պահանջել է կատարել օրենսդրական փոփոխություններ, իսկ մինչեւ այդ փոփոխությունները կատարվելը բոլոր այդ գործերը որոշ բացառություններով հանձնարարվել են Վարչական դատարանին (տե՛ս վերեւում՝ 17-րդ պարբերությունը)։ Այսպիսով, համապատասխան ժամանակահատվածում իրավական պաշտպանության այն միջոցները, որոնց Կառավարությունը հղում է կատարել, նաեւ չեն ունեցել անհրաժեշտ հստակություն։

33. Եվ վերջապես, Դատարանը չի կարող ընդունել Կառավարության փաստարկն այն մասին, որ հետագայում Վարչական դատարանի կողմից իր բողոքը քննելու նպատակով դիմումատուն պետք է դիմեր Սահմանադրական դատարան։ Նախկինում Դատարանը վճռել է, որ իրավական պաշտպանության սահմանադրական միջոցը սովորաբար չի համարվում ներպետական իրավական պաշտպանության միջոց, որը կարող է սպառվել՝ հաշվի առնելով Հայաստանի սահմանադրական դատարանի դատական դերի առանձնահատկությունները (տե՛ս *Գեւորգյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Gevorgyan and Others v.*

Armenia (dec.)], թիվ 66535/10, § 36, 2020 թվականի հունվարի 14), եւ այն սույն գործում այդ եզրակացությունից շեղվելու պատճառներ չի տեսնում։ Կառավարության կողմից առաջարկված հիմքերն այս մասով համոզիչ չեն։

34. Այդ պատճառով Դատարանը համոզված չէ, որ Կառավարության կողմից նշված դատական կարգով վերանայման վարույթներից որեւէ մեկը, որը դիմումատուի համար նախատեսում է իրեն կալանքի տակ պահելու ենթադրյալ ոչ պատշաճ պայմանների վերաբերյալ բողոքների մասով իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոց, հասանելի է եղել եւ՛ տեսականորեն, եւ՛ գործնականում եւ հնարավորություն է տվել կանխարգելելու ենթադրյալ խախտման շարունակությունը, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրել հասցված վնասի փոխհատուցում, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածով։

35. Հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները՝ Դատարանը մերժում է Կառավարության առարկությունը՝ իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասով, եւ գտնում է, որ դիմումատուն իր տրամադրության տակ չի ունեցել իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց 3-րդ հոդվածի համաձայն ներկայացված իր դժգոհությունների համար՝ խախտելով Կոնվենցիայի 13-րդ հոդվածը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցությամբ։

բ) Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտումը

36. Կալանքի տակ պահելու պայմանների եւ բանտի գերբնակեցման մասով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառումը կարգավորող ընդհանուր սկզբունքները եւ այդ գործերով հաստատված ապացուցման չափանիշն ամփոփվել են *Մուրշիչի* գործում (վերեւում հիշատակված՝ §§ 99-101 եւ 122-141)։

37. Սույն գործով դիմումատուն պնդել է, որ 2013 թվականի սեպտեմբերի 23-ից 2015 թվականի մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում իրեն կալանքի տակ պահելու պայմանները չեն

համապատասխանել 3-րդ հոդվածի պահանջներին (տե՛ս 6-րդ եւ 24-րդ պարբերությունները)։ Դատարանը վերահաստատում է, որ երբ ներկայացվում է prima facie (առերեւույթ) վատ վերաբերմունք հանդիսացող՝ կալանքի տակ պահելու ենթադրյալ նվաստացնող պայմանների արժանահավատ եւ ողջամտորեն մանրամասն նկարագրություն, ապացուցման բեռը դրվում է պատասխանող Կառավարության վրա, որը միայն ինքն ունի հասանելիություն այս պնդումները հաստատող կամ հերքող տեղեկություններին (նույն տեղում՝ § 128)։ Դատարանը նկատում է, որ դիմումատուի փաստարկներն այս մասով բավականաչափ մանրամասն են եւ հիմնականում հաստատվել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ եւ համապատասխան ժամանակահատվածին վերաբերող՝ ԽԿԿ զեկույցներով (տե՛ս վերեւում՝ 18-րդ եւ 19-րդ պարբերությունները)։ Կառավարությունը խցերի չափսերի վերաբերյալ դիմումատուի պնդումները վիճարկելիս (տե՛ս վերեւում՝ 22-րդ պարբերությունը) այս մասով չի ներկայացրել որեւէ համոզիչ ապացույց, ինչպես օրինակ՝ նշված խցի հարկի նախագիծը կամ նմանատիպ այլ փաստաթուղթ։ Կառավարության կողմից ներկայացված՝ բանտում կալանքի տակ գտնվող անձանց գրանցամատյանում թեեւ առկա են նշումներ՝ խցակիցների օրական թվի վերաբերյալ, եւ այն մասին, որ նշված խցերը նախատեսված են եղել ութ անձի համար, սակայն այն չի պարունակում տեղեկություններ՝ այդ խցերի փաստացի չափսերի վերաբերյալ, եւ այդ գրանցամատյանում ներկայացված տվյալները բավականաչափ մանրամասն չեն այս հարցով եզրակացություններ անելու համար։ Կառավարությունը նաեւ չի ներկայացրել բանտի ենթադրյալ հիմնանորոգման, այդ թվում՝ դիմումատուի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածից հետո թիվ 7 եւ թիվ 13 խցերի չափսերի ենթադրյալ կրճատման վերաբերյալ որեւէ ապացույց։ Քրեակատարողական պետական ծառայության պաշտոնատար անձի կողմից խցերի ներկա եւ նախկին չափսերի վերաբերյալ հայտարարությունը ներկայացվել է տվյալ իրադարձություններից մի քանի տարի անց։ Դատարանը բազմիցս հրաժարվել է ընդունել նմանատիպ հայտարարությունների վավերությունն այն հիմքով, որ դրանք չեն կարող համարվել բավականաչափ վստահելի՝ հաշվի

առնելով դրանց վաղեմության ժամկետը եւ հիմնավորող փաստաթղթային ապացույցների բացակայությունը (տե՛ս *mutatis mutandis* (*համապատասխան փոփոխություններով*) *Դուդչենկոն ընդդեմ Ռուսաստանի* [*Dudchenko v. Russia*], թիվ 37717/05, § 119, 2017 թվականի նոյեմբերի 7, հաջորդող հղումների հետ միասին)։ Հետեւաբար Կառավարությունը չի ներկայացրել այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են հերքել դիմումատուի պնդումներն այն մասին, որ նրան պահել են 18.6 եւ 21.9 քառակուսի մետր մակերեսով խցերում՝ չներառելով սանհանգույցի տարածքը (տե՛ս վերեւում՝ 24-րդ պարբերությունը, իսկ նվազագույն անձնական տարածքը հաշվարկելու մեթոդաբանության մասով՝ վերեւում հիշատակված՝ *Մուրշիչի* գործը, § 114)։

38. Դատարանը նկատում է, որ վերոնշյալ գրանցամատյանի տվյալների համաձայն (տե՛ս վերեւում՝ 7-րդ պարբերությունը)՝ դիմումատուին կալանքի տակ պահելու ընթացքում բավական երկար ժամանակ՝ մասնավորապես մեկ տարի մեկ ամսից մի փոքր ավելի, թիվ 7 խցում (որի մակերեսը կազմել է 21.9 քառակուսի մետր) պահվող խցակիցների թիվը եղել է 8-ից 10 անձ, իսկ թիվ 13 խցում (որի մակերեսը կազմել է 18.6 քառակուսի մետր)՝ 7-ից 10 անձ՝ ժամանակ առ ժամանակ հասնելով նույնիսկ 12 անձի, ինչը նշանակում է, որ դիմումատուն ունեցել է 3 քառակուսի մետրից պակաս՝ վատագույն դեպքում՝ 1.5 քառակուսի մետր, իսկ լավագույն դեպքում՝ 2.7 քառակուսի մետր անձնական տարածք։ Բացի այդ, նշված փաստաթուղթը չի պարունակում ամբողջական տեղեկություններ դիմումատուին կալանքի տակ պահելու 36-օրյա ժամանակահատվածի վերաբերյալ։ Քանի որ Կառավարությունը չի ներկայացրել ամբողջական տեղեկություններ այդ մասով, Դատարանը չի տեսնում որեւէ պատճառ կասկածելու դիմումատուի այն փաստարկներին, որ նշված խցում ընդհանուր առմամբ պահվել է ութ խցակից՝ այդպիսով այդ երեսունվեց օրերի ընթացքում նրան թողնելով 3 քառակուսի մետրից պակաս անձնական տարածք։ Այսպես՝ վերը նկարագրված ժամանակահատվածներում առաջացել է 3-րդ հոդվածի խախտման լավ հիմնավորված կանխավարկած։ Քանի որ Կառավարությունը չի ապացուցել, որ դրանք եղել են պահանջվող անձնական տարածքի կարճ, պատահական եւ

աննշան կրճատումներ (նույն տեղում՝ §§ 151-153), այս կանխավարկածը չի հերքվել։

39. Ինչ վերաբերում է մնացած իննսուներկու օրերին, ապա կախված դիմումատուի խցակիցների թվից՝ նրան հատկացված անձնական տարածքը տատանվել է 3.1-ից 3.7 քառակուսի մետր մակերեսի միջև՝ բացառությամբ մեկ օրվա, երբ այն եղել է 4.4 քառակուսի մետր։ Հետևաբար Դատարանի գնահատականում տարածքի գործոնը մնում է ծանրակշիռ գործոն՝ այդ ժամանակահատվածում կալանքի տակ պահելու պայմանների բավարար լինելու մասով (նույն տեղում՝ § 139)։ Անդրադառնալով դիմումատուին կալանքի տակ պահելու մյուս հայեցակետերին՝ Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի վիճարկել դիմումատուի պնդումներն այն մասով, որը, ավելին, մեծ մասամբ համընկնում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր պայմանների նկարագրության հետ, որը ներկայացված է ԽԿԿ համապատասխան զեկույցներում (տե՛ս վերևում՝ 18-րդ եւ 19-րդ պարբերությունները)։ Այսպես՝ դիմումատուի վիճակը հետագայում ծանրացել է այն հանգամանքով, որ նա փակված է եղել վնասատուներով վարակված վատ օդափոխվող խցում, ստիպված է եղել շնչել ծխախոտի երկրորդային ծուխը, եւ նրան թույլատրել են դրսում զբոսնել օրական միայն մեկ ժամ (համեմատե՛ք *Վասիլեսցուն ընդդեմ Բելգիայի* [*Vasilescu v. Belgium*], թիվ 64682/12, § 104, 2014 թվականի նոյեմբերի 25, *Սուկաչովն ընդդեմ Ուկրաինայի* [*Sukachov v. Ukraine*], թիվ 14057/17, § 94, 2020 թվականի հունվարի 30, եւ հակադրե՛ք *Նիկիտինն ընդդեմ Էստոնիայի* [*Nikitin and Others v. Estonia*], թիվ 23226/16 եւ եւս 6-ը, § 193, 2019 թվականի հունվարի 29)։ Հաշվի առնելով այս պայմանների հավաքական ազդեցությունը՝ Դատարանը գտնում է, որ դրանք հանգեցրել են նվաստացնող վերաբերմունքի՝ 3-րդ հոդվածի իմաստով։ Ավելին, այն հանգամանքը, որ դիմումատուն մեկ օր ունեցել է 4 քառակուսի մետրից մի փոքր ավելի մեծ անձնական տարածք, չի շեղում այս եզրահանգումից՝ հաշվի առնելով, որ այդ ժամանակահատվածը տեւել է կարճ, եւ արձանագրվել է պայմանների աննշան բարելավում։

40. Հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները՝ Դատարանը եզրակացնում

է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում դիմումատուին կալանքի տակ պահելու պայմանների մասով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում։

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

41. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»։

Ա. Վնասը

42. Դիմումատուն պահանջել է 6 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում։

43. Կառավարությունը պնդել է, որ պահանջված գումարը չափազանցված է։

44. Դատարանը գտնում է, որ կալանքի տակ այնպիսի վատ պայմաններում պահված անձին պատճառված տառապանքը, որը հանգեցնում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, չի կարող թեթեւացվել միայն այդ խախտումը արձանագրելով. այն պահանջում է փոխհատուցման շնորհում։ Տվյալ անձի կողմից այդ պայմաններում անցկացրած ժամանակն ամենակարեւոր գործոնն է հասցված վնասի չափը գնահատելու համար (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Նեշկովը եւ այլք*, § 299)։ Ի հակադրություն դրա՝ խախտումն արձանագրելն ինքնին կարող է համարվել բավարար արդարացի փոխհատուցում Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման դեպքում՝ ելնելով այդ պայմանների մասով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայության հանգամանքից (նույն տեղում)։ Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա եւ հատկապես հաշվի առնելով վատ պայմաններում դիմումատուի անցկացրած ժամանակը, նրան շնորհում է 3 900 եվրո՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ։

Բ. Ծախսերը եւ ծախքերը

45. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի փոխհատուցման պահանջ չի ներկայացրել։

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

46. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ։

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Միացնում* է Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին առարկությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցությամբ 13-րդ հոդվածի առնչությամբ դիմումատուի բողոքի ըստ էության քննությանը եւ մերժում է այն.

2. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում.

4. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցությամբ.

5. *Վճռում է, որ* ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի 3 900 եվրո (երեք հազար ինը հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում

Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

6. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը։

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի մայիսի 3-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի։

Իլզե Ֆրայվըրթ՝ Յոնկո Գրոզեւ՝

Քարտուղարի տեղակալ Նախագահ